ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

23 մայիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

72
(2738)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ԿԱԼԱՆՔԸ ՊԱՏԻԺ ԵՆ ԴԱՐՁՐԵԼ





ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հրապարակում է արել. «Քիչ առաջ դուրս եկա «Աբովյան» քրեակատարողական հիմնարկից. գնացել էի տեսակցելու տիկին Գայանեին, ով Աշոտ Փաշինյանին առերեւույթ առեւանգելու գործով մեկամսյա կալանքի է դատապարտվել:

Տիկին Գայանեի տրամադրությունը լավ էր, կամքը՝ ամուր... Խնդրեց փոխանցել իր անունից շնորհակալություններ նախ զոհվածների ծնողներին, ովքեր լուսացնում են Կառավարության շենքի առջեւ, պայքարում են օրուգիշեր, շնորհակալություններ փոխանցեց նաեւ անծանոթ մարդկանց, ովքեր գնացել են Եռաբլուր, իր որդու՝ Ժորա Մարտիրոսյանի շիրիմին ծաղիկներ խոնարհել: «Ամուր լինենք, պինդ լինենք, հուսով եմ՝ արդարությունը կհաղթի»,- ասաց տիկին Գայանեն:

Անշուշտ, որեւէ մեկի երեխան չպետք է պատասխանատվության ենթարկվի ծնողի արարքների համար, բայց այն խտրականությունը, որ դրսեւորվում է Գայանե Հակոբյանի նկատմամբ, իրապես անընդունելի է:

Ակնհայտ է, որ զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մոր կալանքը ոչ թե խափանման միջոց է, այլ՝ պատժամիջոց: Ընտրովի արդարադատությունը ամենազազրելին է, որ գործում է Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք»:



«Ժողովուրդ» օրաթերթին նոր տեղեկություններ են հասել այն մասին, թե ինչու նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը նոր պաշտոն ստացավ: Ինչպես հայտնի է, դեռ 2022 թվականի նոյեմբերի 4-ին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը պաշտոնապես հաստատեց, որ վարչության ընտրությունները կեղծվել են. արդյունքում վարչության կազմից դուրս էին մնացել իշխող խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ արդեն նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը, փոխարենը նոր վարչության կազմում էին պատգամավոր Արսեն Թորոսյանը եւ ԱԻՆ նախարար Արմեն Փամբուխչյանը: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչեւ քվեաթերթիկների վերահաշվարկը, երբ արդեն հայտնի էր, որ Համբարձում Մաթեւոսյանը կեղծման գլխավոր դերակատարներից էր, վերջինս ոտքի է կանգնել եւ ասել, թե իր տեղը կզիջի Արսեն Թորոսյանին, միայն թե չարժե աղմկել, որ խայտառակությունը չբացահայտվի: Նիկոլ Փաշինյանը Մաթեւոսյանի այս արարքը բարձր է գնահատել եւ ասել, որ հանուն կուսակցության հեղինակության նման անձնազոհության դրսեւորումը շատ կարեւոր է, ինչը պետք է գնահատել: Կարճ ժամանակ անց, իհարկե, Փաշինյանը գնահատեց Համբարձում Մաթեւոսյանի արարքը եւ նրան նշանակեց իր խորհրդական:



Մայիսի 21-ին, երբ Շենգավիթի դատարանի բակում բողոքի ակցիա էր ընթանում, ՀՀ փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ Կամո Ցուցուլյանն այնտեղ էր: Նա եկել էր՝ փրկե՞ր ոստիկանության համակարգի իր նախկին գործընկերներին, թե՞ չի կարողանում կտրվել ոստիկանության համակարգից եւ զբաղվել փրկարար ծառայության գործերով: Հարցն, իհարկե, պարզել չկարողացանք, բայց այն կա ու մնում է արդիական: Ինչպես հայտնի է, մայիսի 20-ին Շենգավիթի դատարանի դատավոր Ժորա Չիչոյանը որոշեց 1-ամսյա կալանքի տանել Աշոտ Փաշինյանի միջադեպի գործով անցնող՝44-օրյա պատերազմի հերոս Ժորա Մարտիրոսյանի մորը՝ Գայանե Հակոբյանին, որից հետո դատարանի մոտ կրքերը թեժացան, եւ զոհված զինծառայողների ծնողները փակեցին ճանապարհը: Ողջ ոստիկանական համակարգը լցվել էր դատարանի մոտ՝ ՀՀ ոստիկանապետի գլխավորությամբ, ու ուշագրավն այն է, որ իջեւանցի Ցուցուլյանը եւս եկել էր հավաքին՝ մոռանալով, որ ՀՀ ոստիկանապետի տեղակալը չէ այլեւս, այլ ՆԳՆ նախարարի տեղակալն է՝ փրկարար ծառայության գծով:




Հաշվեքննիչ պալատը ՀՀ ֆինանսների նախարարությունում ստուգումներ է իրականացրել: Այդ հաշվեքննության արդյունքում 2022 թվականի բյուջեի տարեկան կատարման մասով ուշագրավ փաստեր են հայտնաբերվել: Օրինակ՝ «Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական եւ հարկաբյուջետային քաղաքականության մշակում եւ մոնիտորինգ» ծրագրով առկա է 540 մլն 865 հազար դրամի չափով անհամապատասխանություն: Այստեղ խոսքը վերաբերում է աշխատողների հավելավճարներին եւ պարգեւատրումներին: Առկա է նաեւ խեղաթյուրման ռիսկ՝ «Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման հետ կապված: Այստեղ խեղաթյուրման ռիսկը պայմանավորված է արտարժույթով կատարված վճարներով եւ դրանց տատանումներով: Այս եւ այլ թերացումների մասով Հաշվեքննիչ պալատը նաեւ առաջարկություններ է ներկայացրել Ֆինանսների նախարարություն:

ՁՐՈՒՅՑԵԼ ԵՆՔ

# ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

**«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի հետ:**



**-Պարոն Դանիելյան, ինչպե՞ս կմեկնաբանեք այս օրերին Հայաստանում տեղի ունեցածը, ինչպե՞ս եք տեսնում ելքը:**

-Ծնողների հետ կապված նորից չպատռմամ դեպքը, թե ինչ է կատարվել այս 3 օրերի ընթացքում: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում տիկին Գայանեն է, եւ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ առողջական վիճակը շատ խնդրահարույց է, ունի առողջական լուրջ խնդիրներ, օր առաջ պիտի ազատության մեջ լինի: Այս պահին ծնողների պահանջը եւ պայքարը բոլոր առաջ տիկին Գայանեի՝ազատության մեջ լինելն է, եւ պայքարը տարվում է այդ ուղղությամբ: Գիտենք, որ վերաքննիչ բողոք է ներկայացվել, սակայն այդ գործընթացը երկար կտեւի. իմ տեղեկությունների համաձայն՝մոտ 23 օր կտեւի այդ գործընթացը: Ես առանձնապես հույսեր չունեմ այս իշխանությունների հետ կապված: Դատական գործընթացի ընթացքում մենք էլ՝ որպես երաշխավոր, հանդես եկանք դատարանում, ելույթ ունեցանք եւ երաշխավորեցինք: Կարծես թե ամեն ինչ գնում էր նրան, որ ամենախիստ պատիժը, որ կլինի, տնային կալանքն է, բայց ստացվեց այնպես, որ այդ որոշումը չկայացվեց, եւ այսօր իշխանությունը բիրտ ուժ է կիրառում, եւ առանձնապես հույսեր չկա այս իշխանություններից: Խնդիրն այն է, թե մեր հասարակությունը արդյոք դուրս կգա այդ թմբիրից եւ կկարողանա իր մեջ այդ ուժը գտնել, ժամանակ տրամադրել, զոհված մեր հերոսածին ընտանիքների կողքը կանգնել ու աջակցել: Այսօր այդ մի քանի տասնյակ մարդիկ, որ հավաքված են, պետք է առնվազն մի քանի հարյուր կամ հազար մարդ լինեին այստեղ, որպեսզի կարողանային իշխանությունների վրա ճնշում գործադրեն, գոնե որոշակի չափով իշխանությունը զգար, որ կա այդ պահանջը:

**-Ըստ Ձեզ՝ինչո՞ւ այդ թմբիրից դուրս չեն գալիս:**

-Այս օրերի ընթացքում տարբեր մարդիկ տարբեր ժամերի գալիս են եւ աջակցում են: Ես, կողքից նայելով, զգում եմ այդ աջակցությունը, բայց մարդիկ ապրում են իրենց առօրյա կյանքով, առօրյա հոգսերով եւ ժամանակ են տրամադրում այն ժամանակ, երբ իրենց հարմար է: Նրանց, որ իրենց ժամանակից կտրեն եւ գան ու կանգնեն այս ընտանիքների մոտ, ես չեմ տեսնում, եւ ամենամեծ խնդիրն այն է, որ ցանկացած հայ կարողանա այդ ժամանակը տրամադրել, գալ եւ կանգնել այս ընտանիքների կողքին:

**-Եթե ամփոփենք տեսանյութերը, որոնք առկա են եղել, իրավապահ մարմինների հայտարարությունները, Դուք այդ դեպքերի առնչությամբ ինչպիսի՞ պատկերացում ունեք:**

-Ինչպես գիտենք, Աշոտ Փաշինյանն իր կամքով նստել է մեքենան, եւ այդ ընթացքում, ինչքանով որ ես եմ տեղյակ, գնացել են դեպի Եռաբլուր: Այնտեղ տիկին Գայանեն առաջարկել է գնալ եւ միասին այցելել իր տղայի շիրիմին, եւ որքանով որ ես տեղյակ եմ, տիկին Գայանեն ամեն օր՝ առավոտյան եւ երեկոյան, առանց բացառության, գնում է որդու շիրիմին, եւ պատահական հանդիպել են դատարանի մոտ, որտեղ կարմիր բերետավորների հարցն էր քննարկվում: Հանդիպելուց հետո միգուցե էմոցիոնալ ֆոնի վրա առաջարկել է նստել մեքենան, եւ առաջարկը չի մերժվել: Ծիծաղելի է, որ տիկին Գայանեն, մեն-մենակ դեկին, մեքենայի մեջ կարող էր բռնություն գործադրել. բացառվում է դա: Այստեղ ամենակարեւոր հարցը՝ բարոյականության դաշտի, մարդկային դաշտի մեջ, այն է, որ գիտենք, որ հերոսածին մայր է, կարող էին այդ քննչական գործողությունները տարվել, սակայն հերոսի մայրը լիներ ազատության մեջ: Այս մարդը, ազատության մեջ լինելով, արդյոք կխոչընդոտի՞ վարչապետի ընտանիքին. իհարկե ո՛չ: Իրենք ընտրել են պատժամիջոցներից ամենածայրահեղը. պետք էր գոնե հաշվի առնել առողջական վիճակը, եւ բոլորս գիտենք, որ վերջերս վիրահատական միջամտություն է տարել:

*Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ*

ՊՈՂՈՎ-ՊՈՉՈՎ ԿՈՌՈՒՊՑԻԱ

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ ՏԵՂՅԱԿ ՉԷ

**«Կուսակցության վերաբերյալ բոլոր ստուգումներն իրականացվում են մեր ֆաղաքական թիմի որոշման շնորհիվ»,- երեկ՝ մայիսի 22-ին՝ ճամուկի ասուլիսի ժամանակ, նշեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով «Ժողովուրդ» օրաթերթի բրպակցի հարցին, թե ֆինանսական քաֆանցիկության մասին խոսող Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ինչու է հայտնվում սկանդալի կենտրոնում: Մասնավորապես, լրագրողը նշեց. «Դուք մշտապես խոսում եք լուսավմիջոցների, կուսակցությունների ֆինանսական թափանցիկության մասին, սակայն Ձեր ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր»-ը նորից սկանդալի մեջ է հայտնվել:**

Կուսակցության վարչության կեղծիքից հետո «Ժողովուրդ» օրաթերթը մայիսի 9-ին գրել էր, որ «ԹՄ աուդիտ» անկախ աուդիտորական կազմակերպությունը եզրակացություն է ուղարկել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, համաձայն որի՝ Ձեր ղեկավարած կուսակցությունը՝ՔՊ-ն, իրավաբանական անձանցից ստացել է 16 մլն 300 հազար դրամի աջակցություն, բայց պարզ չէ՝ ովքեր են նվիրատուները: Բացի այդ, երկու իրավաբանական անձից տարածքներ են նվիրել ՔՊ-ին, ու դուք թաքցնում եք, թե ովքեր են եւ ինչու են նվիրել:

Եզրակացության մեջ կարդում ենք նաեւ, որ 525 նվիրատուների մասով եւս որեւէ տեղեկություն առկա չէ, ու գաղտնիք է, թե ովքեր են նվիրատուները, որոնք ՔՊ-ին տարբեր ընծաներ են տվել:

Դուք այս երեւույթները կոռուպցիա էիք համարում մինչեւ իշխանության գալը, իսկ հիմա հայտարարում եք, թե համակարգված կոռուպցիա չկա Հայաստանում:

Հիմա հարցս՝Ձեր բառապաշարով՝ բա դուք կարծում եք՝ կոռուպցիան պոզով, պոչով մեծ կենդանի՞ է: Բացատրեք՝ ինչո՞ւ եք գաղտնի պահում իշխող կուսակցության նվիրատուներին»:

«Ձեր նշած հրապարակումից տեղյակ չեմ, բայց այդ բոլոր ստուգումներն իրականացվում են մեր քաղաքական թիմի որոշման շնորհիվ: Եթե մենք ուզենայինք այդ պոզով-պոչով կենդանուն թաքցնել, օրենքներ չէինք ընդունի: Կոռուպցիան պոզով-պոչով կենդանի չէ, եւ չենք ուզում, որ մեզ մոտ զարգանա»,- ինչեց պատասխանը:

Այնուհետեւ Փաշինյանը, կոնկրետ հարցին ուղիղ պատասխանելու փոխարեն, սկսեց խոսել Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վճարած հարկերից:

*ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ*

# ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԸ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՐԱՔՍԻ ԱՓՈՎ

ՀՀ ԱԱԾ-ն երեկ հաղորդագրություն տարածեց, համաձայն որի՝ մաքսանենգները թմրամիջոցների խմբաքանակը, զենքը եւ զինամթերքը թաքցրել էին հայ-իրանական պետական սահմանի սահմանային շերտի մոտակայքում հետագայում այդտեղից վերցնելու նպատակով:

Ուշագրավ է, որ օրերս ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանն էլ լրագրողների հետ ճեպազրույցում անդրադարձել էր թմրամիջոցների մաքսանենգության նմանատիպ սխեմաներին: ՊԵԿ նախագահը նշել էր, որ հայ-իրանական սահմանին մաքսանենգները թմրանյութերը նետում են Արաքս գետի վրայով կամ անօդաչու թռչող սարքով տեղափոխում եւ թողնում են այնպիսի գոտում, որտեղից իրենց հանցակիցները կարող են վերցնել:

Պետական երկու կառույցների՝ միմյանց փոխլրացնող հայտարարությունները վկայում են այն մասին, որ իրավապահ համակարգերի միջեւ ձեւավորվել է սերտ համագործակցության հարթակ՝ նման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Տեսնենք՝ ինչ շոշափելի արդյունքներ կարձանագրվեն:

# ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է 2 ՀՈԴՎԱԾ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը մանրամասներ ներկայացրեց վաշինգտոնյան բանակցություններից: Միրզոյանը մայիսի 22-ին կայացած ճամուկի ասուլիսի ժամանակ ասաց, որ Վաշինգտոնում բանակցությունների հարցում որոշակի առաջընթաց է ձեռք բերվել այն առումով, որ խաղաղության պայմանագրի նախագծի եւս երկու հոդված հնարավոր է եղել համաձայնեցնել, բայց մի քանի այլ հոդվածների շուրջ հնարավոր է եղել ուղիղ, երկար, անկեղծ խոսակցություն ծավալել: «Կարող եմ ասել, որ այդ խոսակցությունների ընթացքում կողմերը շատ լավ են հասկանում մեկը մյուսի մտահոգությունները, մտադրությունները եւ պատկերացումները: Բացի նշածս երկու հոդվածից, կարծում եմ՝ մյուս հոդվածների մասով եւս հավանականություն կա համաձայնության: Սա միայն իմ գնահատականը չէ. ինձ հավաստիացրել են մյուս կողմերը եւս: Անշուշտ, կան հոդվածներ եւ թեմաներ, որտեղ կողմերի դիրքորոշումները բավական հեռու են իրարից: Սրանք այն հոդվածներն են, որոնք առնչվում են ամենազգայուն խնդիրներին, բայց այս ուղղությամբ եւս բավականին արդյունավետ քննարկում է եղել»,- ասաց Միրզոյանը: ԱԳ նախարարը նաեւ վերահաստատեց Հայաստանի հանձնառությունը՝ հաստատել երկարատեւ, կայուն եւ արժանապատիվ խաղաղություն Հարավային Կովկասում: «Հայաստանը միայնակ չի կարող կառուցողական քայլեր գործադրել»,- նշեց Միրզոյանը:

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հաշվեքննիչ պալատը որոշել է վերապատրաստել իր աշխատակիցներին: Armlur.am-ը տեղեկացավ, որ Հաշվեքննիչ պալատը 207 հազար դրամ է տրամադրելու այդ նպատակի իրականացման համար: Վերապատրաստում անցնելու են 18 աշխատակիցներ եռօրյա ծրագրային դասընթացների միջոցով:

## ՈՐՔԱ՞Ն ԵՆ ԿԱԶՄԵԼ ՀԱՐԿԵՐԸ

Մայիսի 29-ին խորհրդարանում մեկնարկելու է 2022 թվականի պետական բյուջեի նախագծի կատարման հաշվետվությունը: Այն կսկսվի մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 29-ին նախատեսված է նաեւ Նիկոլ Փաշինյանի այցը խորհրդարան:

Այդպիսով, տեղեկացանք, որ ՀՀ 2022թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ պետական բյուջե է մուտքագրվել 1,819.0 մլրդ դրամի հարկ եւ 106.8 մլրդ դրամի տուրք:

2013-2022թթ. ԱԱՀ եւ եկամտային հարկի գծով վճարները կազմել են պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը: Այդ երկու հարկատեսակների գծով մուտքերը 2013-2021թթ. կազմել են հարկերի եւ տուրքերի 60.4-67.4 տոկոսը:

2022թ. վերջին 10 տարվա ընթացքում առաջին անգամ ԱԱՀ եւ եկամտային հարկի գծով մուտքերը հարկերի եւ տուրքերի 60 տոկոսից պակաս են եղել:

## ԱՅՍՕՐՎԱ ՕՐԱԿԱՐԳԸ

Այսօր մեկնարկելու է նստաշրջանը: Այսպիսով, ArmLur.am-ը տեղեկացավ, որ այսօրվա մեկնարկելիք նստաշրջանի օրակարգում ընդգրկված են 24 հարց: Մայիսի 24-ին՝ չորեքշաբթի օրը, խորհրդարանում մի քանի ընտրություններ կլինեն, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրություն, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրություն, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրություն, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրություն եւ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրություն:

Հավելենք, որ բոլոր ընտրությունների պարագայում էլ իշխող ՔՊ-ն ունի իր սրտի թեկնածուն, որն էլ կընտրվի ընտրությունների արդյունքներում:

ՃԱՆԱՊԱՐՀԸ՝ ՎՏԱՆԳԱՎՈՐ

# ՏԱՎՈՒՇԻ ԳՅՈՒՂԵՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

**«Միջազգային հանրության ընկալումն ավելի ու ավելի cաs է հակվում այն բանաձեւին, nr Հայաստանն ու Ադրբեջանն առանց վերապահումների ղեsf է ճանաչեն միմյանց համապատասխանաբար 29 հազար 800 fառակուսի կիլոմեsr եւ 86 հազար 600 fառակուսի կիլոմեsr sարածfային ամբողջականությունը, եւ ԼՂ հայության իրավունfների եւ անվsանգության ապահովման cուրջ Բաfվի եւ Սsեփանակերsի միջեւ ղեsf է sեղի ունենա երկխոսություն»,- երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, նcել է ՀՀ վարչապեs Նիկոլ Փաcինյանը եւ ասել, nr Երեւանը համաձայն է այս sրամաբանությանը եւ բանակցությունները վարում է այս sրամաբանությամբ: Այսինfն՝ սsացվում է՝ Sավուcի 6 գյուղերն ու Sիգրանաcենը Հայաստանի 29 հազար 800 fառակուսի կմ-ի մեջ չեն մsնում:**



Իսկ որո՞նք են Տավուշի այդ վեց գյուղերը: Հայկական ուսումնասիրությունների «Անի» կենտրոնը 2021 թվականի մարտի 8-ին հոդված էր հրապարակել Տավուշի անկլավային եւ սահմանակից յոթ գյուղերի մասին, որոնք 1992 թվականից հայկական վերահսկողության տակ են: Այսպիսով, կենտրոնը ներկայացրել է 7 գյուղերը՝ Յուխար, Աշաղ, Աքսիպարա Բաղանիս-Այրում, Բարխուդարլու, Խեյրիմլի, Կըզըլ, Հաջիլի, Սոֆուլու: Բացի այս գյուղերից, անկլավ է համարում նաեւ Արարատի մարզի Քյարքին՝ Տիգրանաշենը, որի մասին եւս Փաշինյանն իր ասուլիսում չիերքեց: Իսկ Արծվաշենն էլ 1992թ.-ին ադրբեջանական զինուժն է գրավել, եւ այժմ էլ այն այդ երկրի տարածքում է: Այսինքն՝ ադրբեջանական կողմն էլ պետք է վերադարձնի այդ անկլավը: Տավուշի այդ 7 գյուղերից երեքով է անցնում դեպի Վրաստան միջպետական ճանապարհը եւ այդ նույն ճանապարհին է կապում Հայաստանը Ռուսաստանի հետ: Ընդ որում՝ Հայաստան մտնող գազատարն էլ է այդտեղով անցնում: Հայ-ադրբեջանական պատերազմի սկզբնական փուլում՝ 1990 թ. հունվարի 15-ին, հայկական աշխարհազորային ջոկատները գրավեցին Արարատի շրջանում՝ Նախիջեւանի սահմանից ոչ հեռու գտնվող ադրբեջանական Քյարքի անկլավը, որի միջով էր անցնում Երեւան-Մեղրի ռազմավարական նշանակության մայրուղին: Քյարքի գյուղը հետագայում վերանվանվեց Տիգրանաշեն: 1992 թ. հունիսին հայկական ուժերի ռազմական գործողությունների արդյունքում ճնշվեց նաեւ Վերին Ասքիպարա (Աքսիպարա) ադրբեջանաբնակ անկլավում տեղակայված կրակակետը, իսկ բնակչությունը բաց թողնված միջանցքով հեռացավ Ադրբեջան: Նույն ժամանակաշրջանում հայկական ուժերը վերահսկողություն հաստատեցին նաեւ վերջին անկլավի՝ Բարխուդարլը եւ Սոֆուլու գյուղերի նկատմամբ: Այնուհետեւ Հայաստանը ցավալի տարածքային կորուստ ունեցավ. 1992 թ. 8 օգոստոսին՝ հնգօրյա արյունահեղ մարտերից հետո, ընկավ Արծվաշենը: Փաշինյանն ասուլիսի ժամանակ նաեւ նշել է, որ ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում շարունակում է մնալ լարված: Նրա խոսքով՝ Ադրբեջանի հետ խաղաղության եւ հարաբերությունների հաստատման պայմանագրի շուրջ ինտենսիվ բանակցություններ են ընթանում: «Միջազգային հանրության ընկալումն ավելի ու ավելի շատ է հակվում այն բանաձեւին, որ Հայաստանն ու Ադրբեջանն առանց վերապահումների պետք է ճանաչեն միմյանց համապատասխանաբար 29 հազար 800 քառակուսի կիլոմետր եւ 86 հազար 600 քառակուսի կիլոմետր տարածքային ամբողջականությունը, եւ ԼՂ հայության իրավունքների եւ անվտանգության ապահովման շուրջ Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ պետք է տեղի ունենա երկխոսություն», - նշեց գործադիրի ղեկավարը՝նկատելով՝Երեւանը համաձայն է այս տրամաբանությանը եւ բանակցությունները վարում է այս տրամաբանությամբ:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ ԲԵԼԱՌՈՒՍ

Հայաստանից հունիսի 5-7-ը ԱԺ պատվիրակություն կգործուղվի Բելառուս:

Պատվիրակությունը Մինսկում կմասնակցի Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովների միջեւ համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 13-րդ նիստի աշխատանքներին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում կլինեն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Մարինա Ղազարյանը եւ Դավիթ Դանիելյանը:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը եւ օրապահիկը, կկատարվեն ՀՀ պետբյուջեի հաշվին, իսկ գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

## ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Գայանե Մարտիրոսյանի պաշտպան Վահան Հովհաննիսյանը հայտարարություն է տարածել. «Տիկին Գայանեի վերաքննիչ բողոքը ավարտեցինք: Մուտք ենք անում դատարան: Մի հատվածի վրա հրավիրեմ Ձեր ուշադրությունը. դատարանն արձանագրել է, որ նոր հանցանք կատարելու /Աշոտին կրկին առեւանգելու/ հիմքը առկա է, քանի որ տիկին Գայանեի կողմից Ա. Փաշինյանին առերեւույթ առեւանգելու հանգամանքը կապված է եղել տուժողի մերձավոր ազգականի պետական եւ քաղաքական գործունեության հետ, որը ներկա պայմաններում եւս շարունակվում է: Այսպիսով, դատարանն արձանագրել է, որ ազատության մեջ մնալու դեպքում տիկին Գայանեն կարող է նորից առեւանգել Ա. Փաշինյանին, եւ այդպիսի հիմքն իրատեսական է, քանի դեռ Ն. Փաշինյանը շարունակում է պաշտոնավարել: Այս տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում դատարանի փաստարկից անմիջականորեն բխում է, որ տիկին Գայանեն պետք է շարունակաբար մնա կալանքի տակ այնքան ժամանակ, քանի դեռ Ն. Փաշինյանը պաշտոնավարում է, քանի որ այդ դեպքում միշտ իրատեսական է, որ Ա. Փաշինյանը կառեւանգվի: Ինքներդ գնահատե՛ք: Մնացած հանգամանքների մասով առաջիկայում պաշտպանական խումբը կազմակերպելու է ասուլիս»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՆՈՐ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

**ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների իրացման եւ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների ու Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանային վարչության «Մեղրի» ջոկատի ծառայողների աջակցությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել եւ կանխվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետության տարածք առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցներ, ինչպես նաեւ զենք, զինամթերք տեղափոխելու դեպք:**




Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացի Ռ.Պ-ն ինքնությունը դեռեւս չպարզաբանված ԻԻՀ մի քաղաքացու հետ միասին, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, սույն թվականի մայիսի 18-ին Իրանի Իսլամական Հանրապետությունից մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետություն են պատրաստվում ներկրել իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերի տարատեսակ թմրամիջոցների խմբաքանակ, ինչպես նաեւ զենք, զինամթերք:

Համատեղ պլանավորված ու ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ս.թ-ի մայիսի 18-ին Ռ.Պ-ն հայ-իրանական պետական սահմանի Մեղրի քաղաքի հարակից տեղանքում՝ ինքնությունը դեռեւս չպարզաբանված ԻԻՀ քաղաքացու կողմից նշված վայրում, վերցրել է նրա կողմից մաքսանենգ ճանապարհով ՀՀ առաքված թմրամիջոցների վերոնշյալ խմբաքանակը, զենքը եւ զինամթերքը, սակայն դրսեւորելով զգուշավորություն, չբացահայտվելու նկատառումներից ելնելով՝ թաքցրել է այն հայ-իրանական պետական սահմանի սահմանային շերտի մոտակայքում եւ հեռացել: Այնուհետեւ՝ մայիսի 19-ին, Ռ.Պ-ն, վերոնշյալ հանցավոր արարքներին ներգրավելով ՀՀ քաղաքացիների՝ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի բնակիչներ Մ.Պ-ին եւ Ա.Ք-ին, վերջիններիս ուղղորդել է Ա.Ք-ի կողմից շահագործվող Toyota մակնիշի ավտոմեքենայով Քաջարանից մեկնել հայ-իրանական պետական սահմանի սահմանային շերտ եւ իր նկարագրած թաքստոցից վերցնել թմրամիջոցների խմբաքանակը, զենքը, զինամթերքը ու այն տեղափոխել Քաջարան:

Հանցավոր խմբի գործունեությունը կասեցվել է, քանի որ Մեղրի քաղաքի մոտակայքում ավտոմեքենան կանգնեցվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների եւ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության «Մեղրի» ջոկատի ծառայողների կողմից: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության պայմաններում Ռ.Պ-ն, Ա.Ք-ն եւ Մ.Պ-ն ձերբակալվել են:

Ավտոմեքենան տեղափոխվել է ՀՀ ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության հատուկ պահպանվող տարածք, որտեղ քննչական գործողությունների արդյունքում հայտնաբերվել են 10 կիլոգրամը գերազանցող ընդհանուր քաշով Հերոին, Մեթամֆետամին եւ Մարիխուանա տեսակի թմրամիջոցների զանգվածներով լցված 20 տարբեր փաթեթներ, ինչպես նաեւ արտասահմանյան արտադրության 2 հատ մարտական ատրճանակներ՝ իրենց 20 հատ փամփուշտներով: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննությունը շարունակվում է:

*Ք.Մ.*

ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ

# ԿԱՆԱՆՑ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԵՐ

**Armlur.am–ն ուշագրավ հանգամանք է արձանագրել. կանանց են առեւանգում եւ տանում Վանաձոր քաղաք:**

Խոսենք փաստերով. այսպիսով, մեզ հայտնի դարձավ՝ Ն. Մարուքյանին մեղադրանք է առաջադրվել , որ նա, 2022 թվականի հոկտեմբերի 31-ին՝ժամը 19:00-ի սահմաններում, ինքնությունը չպարզված անձի վարած ավտոմեքենայով հետապնդելով տաքսիով աշխատավայրից տուն վերադարձող իր վաղեմի ծանոթ Լ. Դանիելյանին, Վանաձոր քաղաքի Ֆիդայինների եւ Լանջային փողոցների շրջանաձեւ խաչմերուկում արգելափակել են տաքսու երթեւեկությունը, որից հետո, երբ Լուսինե Դանիելյանը դուրս է եկել ու պահանջել չմոտենալ, չառնչվել իր հետ, նրա կամքին հակառակ, բռնելով ձեռքն ու ստիպողաբար ուղեկցելով, նստեցրել է ավտոմեքենայի հետեւի նստատեղին, ապա նստելով Լուսինե Դանիելյանի կողքին՝ ամուսնության նպատակով ինքնությունը չպարզված վերոհիշյալ վարորդի հետ առեւանգել են նրան եւ տեղափոխել Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասում գտնվող «Այգ» ռեստորանային համալիրի մոտ:

Սա միակ դեպքը չէ:

Ն. Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2022 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 18:1-ի սահմաններում, Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրում գործող «Հեքիաթ» կոչվող հանգստյան գոտու դիմաց գտնվող «Դենդրոպարկ» հանգստյան գոտու տարածք տեղափոխվելու նպատակով իր ավտոմեքենան նստած Ի. Գալստյանին ամուսնության նպատակով առեւանգելու դիտավորությամբ, նրա վստահությունը չարաշահելու եւ խաբեության միջոցով՝ Գյուլագարակ բնակավայրից բենզին գնելու պատրվակով մեքենան վարել է այդ ուղղությամբ, ապա, վերջինիս կամքին հակառակ, նրան առեւանգել ու տեղափոխել է քաղաք Վանաձոր՝ նախապես իր կողմից վարձակալած բնակարան:

*Ք.Մ.*

ԼՈՒՐԵՐ

## ԳՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վաչագան Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ չպարզված օրը գնացել է Սեւան քաղաքի Շահումյան փող. 43-րդ հասցեում գտնվող «Հայաստանի կույրերի միավորման Սեւանի ուսումնաարտադրական ձեռնարկություն» ՍՊԸ ընկերության մասնաշենքի մոտ, պատուհանից ապակին հանելով՝ ապօրինի մուտք է գործել մասնաշենք եւ արտադրական մասնաշենքի տարբեր հատվածներից գաղտնի հափշտակել տարբեր արժողությամբ իրեր:

## ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՐԵՑ

2019 թվականին Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել էր, որ նախկին մարզպետ Խաչատրյանը 2011-2012թթ.-ին Նորավան համայնքի ղեկավար Լավրենտիկ Առաքելյանին ապօրինի կարգադրել է համայնքին պատկանող 5.132.891 դրամ արժողությամբ մետաղական խողովակներն առանց որեւէ օրինական հիմքի հանձնել իր եղբորը, Լ. Առաքելյանն էլ կատարել էր կարգադրությունը: Բացի այդ, 2016թ.-ին Ս. Խաչատրյանը մի ապօրինի կարգադրությամբ էլ Ակներ համայնքի ղեկավարից պահանջել է համայնքի սեփականություն հողամասից կեղծ աճուրդով օտարել Աշոտ Գեւորգյանին: Լիսկայի այս կարգադրությունն էլ կատարել են: Այժմ մեղադրանք է առաջադրվել եւ՛ Լ. Առաքելյանին, եւ՛ Ա. Գեւորգյանին: Սուրիկ Խաչատրյանի նկատմամբ հետախուզում է հայտարարվել, խափանման միջոցը կալանավորումն է:

Լավրենտիկ Առաքելյանին մեղադրանք էր առաջադրվել, որ նա, 2001թ.մինչեւ 2012 թ.նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Սյունիքի մարզի Նորավան համայնքի ղեկավարի պաշտոնը, Սյունիքի նախկին մարզպետ Ս. Խաչատրյանի դրդմամբ 2011թ. կամ 2012թ. վատնել է համայնքային սեփականություն հանդիսացող, իրեն վստահված, առանձնապես խոշոր չափերով՝ 5132891 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ մետաղական խողովակները:

Աշոտ Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա խոչընդոտներ վերացնելու եղանակով օժանդակել է Ս. Մինասյանի եւ Լ. Սահակյանի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելուն:

Այս գործը տեղափոխվել էր Հակակոռուպցիոն դատարան, որտեղ էլ, ինչպես Armlur.am-ին հայտնի դարձավ, վաղեմության հիմքով գործը կարճվել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 19-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 111 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԱՐԴՅՈՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈ՞Ւ Է

Այս տարի լրանում է Երեւանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղի հիմնադրման 20-րդ տարեդարձը: Կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը երկու տասնամյակ առաջ բացվեց՝ որպես խաղողի մթերման կետ: Բերդի համայնքապետարանը հայտնում է, որ Բերդ համայնքում խաղողագործության զարգացմանը նպաստելու, ոլորտի հնարավորություններն ընդլայնելու գործում ունեցած ներդրման, բնակչության հետ սերտ համագործակցության համար Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը պատվոգիր ու շնորհակալագիր է հանձնել Երեւանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն Սերգեյ Խաչատրյանին եւ Բերդի մասնաճյուղի կառավարիչ Գարիկ Վարդանյանին: Բերդի մասնաճյուղի կառավարիչ Գարիկ Վարդանյանը հայտնել է, որ այժմ Բերդի մասնաճյուղը համագործակցության պայմանագրեր ունի Բերդ համայնքի 800 խաղողագործի հետ: Պեռնո Ռիկար խումբը, որին պատկանում է Երեւանի կոնյակի գործարանը, որոշում է կայացրել Ռուսաստանում գործունեության դադարեցման վերաբերյալ: Հարց է՝ հաջորդ տարի եւս Երեւանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը մթերման պայմանագրեր է կնքելու արդյոք սահմանամերձ Բերդ համայնքի 800 խաղողագործների հետ. չկնքելու դեպքում Բերդ համայնքի խաղողագործները ո՞ր գործարանին են մթերելու իրենց աճեցրած բերքը:

## ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցադրում անելով, որ, ըստ կառավարության հաստատած չափորոշիչի, բժշկական շտապ օգնության բրիգադների ձեւավորումն իրականացվում է յուրաքանչյուր 20 հազար բնակչին՝ մեկ բրիգադ սկզբունքով, 46 հազար բնակիչ սպասարկող Իջեւանի բժշկական կենտրոնում միաժամանակ շտապ օգնության քանի բրիգադ է գործում: Տավուշի մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ «Իջեւանի ԲԿ» ՓԲԸ-ում, շտապ օգնության մեկ բրիգադից բացի, գործում է նաեւ ռեանիմացիոն մեկ բրիգադ եւ տնային հերթապահության մեկ բրիգադ, որոնք սպասարկում են միաժամանակյա տրված կանչերը:

## ՃԱՆԱՊԱՐՀԸ ԿՆՈՐՈԳՎԻ

Ավելի քան երեք տարի է, ինչ Վազաշեն-Պառավաքար՝ սահմանագոտին շրջանցող, ադրբեջանական զինուժի ոտնձգություններից համեմատաբար ապահով ճանապարհին կառուցված անվտանգության պատը կիսաքանդ է: Տավուշի մարզպետարանից լրագրողիս հայտնել են, որ նշված ճանապարհին գաբիոններից հենապատի եւ եթեւեկելի մասի վերականգնումն ընդգրկված է Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրում, որը նախատեսված է իրականացնել 2023թ.-ին:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

# ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԿԵՂԾԵԼ

**Ավարտվել է կաշառքի դիմաց 10 եւ ավելի օր ՀՀ-ում չգտնված ԻԻՀ երեք քաղաքացիներին «covid-19» համավարակի դեմ պատվաստման եւ հավաստագրերի տրամադրման, այդ նպատակով փաստաթղթեր կեղծելու դեպքի նախաքննությունը:**



ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների ընթացքում պարզվել է, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ շարունակական մասնագիտական զարգացման հավաստագրերի տրամադրման բաժնի մասնագետը, ՀՀ առողջապահության նախարարի եւ նշված ընկերության տնօրենի հրամանների համաձայն, նշանակված է եղել Երեւան քաղաքի Գայի պողոտայում տեղակայված շարժական պատվաստումային կետի պատասխանատու:

Խախտելով համապատասխան հրամանով հաստատված կարգը՝ իր պատասխանատվության տիրույթում գտնվող շարժական պատվաստման կետում նա կաշառքի դիմաց կազմակերպել է Հայաստանի Հանրապետությունում 10 եւ ավելի օր չգտնված ԻԻՀ երեք քաղաքացիների՝ «Քովիդ-19» համավարակի դեմ պատվաստման եւ հավաստագրերի տրամադրման գործընթացը:

Մասնավորապես, քննությամբ հիմնավորվել է, որ պատվաստումային կետի պատասխանատու նշված անձը, կորոնավիրուսի համավարակի դեմ պատվաստման գործընթացը կաշառքի միջոցով կազմակերպելու վերաբերյալ նախնական համաձայնություն ունենալով Երեւան քաղաքի 37-ամյա բնակչի հետ, 2021թ. օգոստոսի 21-ին վերջինից ընդունել է ԻԻՀ հիշյալ քաղաքացիների օգտին ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու դիմաց առնվազն 600 ԱՄՆ դոլար կաշառք ստանալու առաջարկը:

37-ամյա տղամարդը, կեղծ փաստաթուղթ կազմելու եւ օգտագործելու միջոցով խոչընդոտը վերացնելու շուրջ նախնական համաձայնության գալով Երեւան քաղաքի 39-ամյա բնակիչ իր ծանոթի հետ, 2021թ. օգոստոսի 21-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, առեւտրի կետրոնի դիմաց հանդիպել է վերջինիս իր ծանոթներ ԻԻՀ քաղաքացիների պատվաստումը կազմակերպելու համար: Ապա 39-ամյա տղամարդը ստացել է ԻԻՀ քաղաքացիների կողմից փոխանցված 800 ԱՄՆ դոլարը, որից 600 դոլարը՝ պատվաստման կետի պատասխանատու անձին փոխանցելու նպատակով:

Իր տրամադրության տակ ունենալով ԻԻՀ քաղաքացիների անձնագրերը՝ 37-ամյա տղամարդը խոչընդոտները վերացնելու նպատակով պատճենահանման եղանակով կեղծել է անձնագրերի՝ ՀՀ սահմանը հատելու ժամկետի վերաբերյալ դրոշմ պարունակող էջերն այնպես, որ իրական ժամկետի փոխարեն անձնագրում երեւա 15 օր ավելի ուշ ՀՀ տարածք մուտք գործած լինելու տվյալ:

Այնուհետեւ նշված անձանց ուղեկցել է պատվաստման կետ, հանդիպել պատվաստումային կետի պատասխանատուին, որից հետո վերջինս ձեւականորեն, իբր ստուգել է նրանց կողմից ներկայացված փաստաթղթերը՝ թույլատրելով վերոհիշյալ անձանց պատվաստել «Քովիդ-19» համավարակի դեմ, դրա վերաբերյալ այդ անձանց անվամբ նա լրացրել է համապատասխան հավաստագրեր ու հանձնել նրանց:

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ պատվաստման գործընթացն ավարտվելուց հետո Երեւան քաղաքի 37 եւ 39-ամյա բնակիչներն առանձնացել են 600 ԱՄՆ դոլար կաշառքը փոխանցելու նպատակով, սակայն նույն պահին բռնվել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ առողջապահության ազգային ինստիտուտի մասնագետին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 37-ամյա տղամարդուն՝ 46-435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 457-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, որը հետագայում փոխարինվել է բացակայելու արգելքով: Իսկ 39-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ, ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին:

ԼՈՒՐԵՐ

## 8 ՏՈԿՈՍ ԳՆԱՃ՝ ՓԵՏՐՎԱՐԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2023 թվականի առաջին եռամսյակում 12-ամսյա գնաճը որոշակիորեն նվազել է, սակայն դեռեւս մնում է բարձր. փետրվարին գնաճը կազմել է 8.1%: Կենտրոնական բանկն իր հաշվետվության մեջ նշում է, թե իրականացվող դրամավարկային քաղաքականության եւ սպասվող մակրոտնտեսական զարգացումների ներքո 12-ամսյա գնաճը տարվա ընթացքում կնվազի եւ հետագայում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

## Ի՞ՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ ԱՅՍՕՐ

Խորհրդարանում այսօր մեկնարկելու է հերթական նստաշրջանը:

Օրակարգում է նաեւ Հաշվեքննիչ պալատի՝ 2022 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը: Հաշվետվությունը երեսունչորս էջից է կազմված:

2022 թվականի գործունեության ընթացքում կառույցն իրականացրել է 54 հաշվեքննություն, որից քառասունը՝ 2022 թվականի գործունեության շրջանակներում: Իրականացված 11 հաշվեքննության արդյունքներով՝ Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել են եզրակացություններ եւ ուղարկվել Ազգային ժողով, կառավարություն եւ համապատասխան մարմիններ: Տասնութ գերատեսչություններում իրականացվել են հաշվեքննություններ, որոնցից տասներեքում արձանագրվել են 138 անհամապատասխանություններ:

Վեց գերատեսչությունում արձանագրվել է 26 խեղաթյուրում, որի ընդհանուր գումարը կազմել է 2 մլրդ 651 մլն դրամ:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 32 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 39-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Ծ. Իսակովի պողոտա, 13/5 հասցեում գտնվող 0,4475 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 695000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով եւ, այնուհետեւ, յուրաքանչյուր աշխատանքային օր: Դասական փուլերում չվաճառված գույքը, բանկի հանձնարարականով, սակարկվում է հոլանդական եղանակով՝ մեկնարկային գների 10%-ի իջեցումով յուրաքանչյուր հաջորդ փուլին, բայց ոչ պակաս պատվիրատուի կողմից ներկայացված վերջնական հատման գնից: Աճուրդի ավարտը՝29.12.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Եր—ան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

## ՈՒՏԻԼԻԶԱՑՆԵԼՈՒ ՏԵՂ ՉԿԱ

# 700+ ՏՈՆՆԱ ՉՄԱՔՍԱԶԵՐԾՎԱԾ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ

**«12 ընկերություն ներմուծած թունաքիմիկատը չեն կարողանում մաքսազերծել. հիմա Հայաստանում կա 700+ տոննա չմաքսազերծված թունաքիմիկատ. եթե ժամկետն անցավ, մենք այդ հսկայածավալ թույնը ուտիլիզացնելու տեղ ու հնարավորություն չունենք»,- Facebook-ի իր էջում գրել է գյուղատնտեսության փորձագետ Հարություն Մնացականյանը:**



Նա նաեւ նշել է. «Քանի օր է Երեւանը ծխի մեջ կորած է, պատկան մարմինները դեռ ոչինչ չեն կարողանում անել. դե, ինչքան էլ կշարունակվի այդպես, չգիտենք: Հիմա ասեմ ավելի վատի մասին. ուրեմն, կառավարության շատ «հանճարեղ» որոշումներից մեկով ինչ-որ փոփոխություններ են մտցրել, որի պատճառով թունաքիմիկատներ ներմուծող մոտ 12 ընկերություն ներմուծած թունաքիմիկատը չեն կարողանում մաքսազերծել:

Հիմա Հայաստանում կա 700+ տոննա չմաքսազերծված թունաքիմիկատ (հա, որոշ տնտեսվարողներից էլ մաքսազերծման գումարի մեծ մասը ստացել են), որը ռեալ վտանգ է մեր երկրի համար, քանի որ եթե դա մնաց, եւ ժամկետն անցավ, մենք այդ հսկայածավալ թույնը ուտիլիզացնելու տեղ ու հնարավորություն չունենք, ու մեզ սպասվում է էկոլոգիական թեթեւ աղետ լավագույն դեպքում:

Այս հարցը բարձրացրել եմ բազմաթիվ պաշտոնյաների, տեղյակ եմ պահել, խոսել եմ հնարավոր ռիսկերի մասին, եւ այսքան ամիսների ընթացքում տեղի է ունեցել մի թեթեւ տեղաշարժ: Ճիշտն ասած, վախենում եմ՝ մինչեւ ԱԺ-ի՝ արձակուրդ գնալը այս հարցը չլուծեն:

Հարգելի՛ լրատվականներ ու բնապահպանական կազմակերպություններ, խնդրում եմ, այս հարցերը դուք էլ բարձրացրե՛ք, ժողովո՛ւրդ ջան, շատ-շատ վտանգավոր թեմա է, ախր:

Քաղաքական գործիչնե՛ր ջան, խնդրում եմ, դուք էլ խոսե՛ք. անգործության հետեւանքները աղետալի են լինելու»:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Կենտրոն, Հնդկաստանի փողոց, 4 շենք, 41 հասցեում գտնվող 62,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 47000000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՖՈՏՈՇԱՐՔ

# ՍԻԼՎԻ ԲԱՐԿՈՎԱՆ ԽՈՍԵԼ Է ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

**Դերասանուհի Սիլվի Բարկովան, որն ամուսնությունից հետո բնակություն է հաստատել Հնդկաստանի Մումբայ քաղաքում, որդու՝ լույս աշխարհ գալուց հետո իր երկրպագուներին է ներկայացրել ընտանեկան առաջին ֆոտոշարքը: Դերասանուհին լուսանկարներին կից կատարել է հուզիչ գրառում. «Ես քեզ կյանք տվեցի: Ես քեզ տանում էի այտուցված ոտքերով եւ այրոցով, ես պետք է առողջ սնվեի, որ դու շուտ մեծանաս եւ ուժեղ լինես: Մի վայրկյան ծիծաղում էի, իսկ հաջորդ անգամ լաց լինում եւ օրը 50 անգամ անհանգիստ քնով վազում էի զուգարան, մինչեւ դու պատրաստ լինեիր աշխարհ գալ, քանի որ ես քո տունն էի, իսկ հետո ժամանակը կանգ առավ, երբ քեզ դրեցին իմ գրկում, եւ ես բռնեցի քո փոքրիկ մարմինը եւ կերակրեցի քեզ, մինչեւ դու մի փոքր ժպտացիր եւ քնեցիր իմ կրծքին...: Այսպիսով, իմ միտքն ու սիրտը պտտվում են ձեր շուրջը, եւ միշտ կլինեն»: Հիշեցնենք, որ Սիլվիի ամուսինն ազգությամբ հնդիկ է:**



Ամուսնությունից հետո զույգն ապրում է Հնդկաստանում: Դերասանուհին, ավելի վաղ մեզ հետ զրույցում անդրադառնալով Հնդկաստանում ապրելուն եւ զբաղվածությանը, նշել էր. «Զբաղված եմ ընտանեկան կյանքը վայելելով, երբեմն՝ որպես ֆոտոմոդել հանդես գալով: Դժվարություններ, անխոս, եղել են, բայց դրանք հեշտ հաղթահարելի են եղել: Ամուսինս, եթե անկեղծ, հայկական մենթալիտետ ունի: Ես բացարձակ չեմ զգում, որ ամուսնացել եմ օտարերկրացու հետ: Ես միայն ֆիզիկապես եմ բացակայում երկրից: Շատ եմ նեղսրտում, որ մենք կորցնելուց հետո ենք գնահատում, որ մենք միայն շատ վատ էքստրիմի ժամանակ ենք միախմբվում, որ մենք էդպես էլ չունեցանք երկիրն ու իր ազգին սիրող առաջնորդ, եւ այս դժվարին պահին նորից թանկացումներ են սկսել... Ու շատ-շատ նմանատիպ տխուր, ես կասեի՝ ողբերգական բաներ: Հավատք ունեմ, որ չենք կորցնի մեր անկախությունը, որ Հայաստանը «կա»-ից չի վերածվի «կար»-ի, ու եթե ոչ բոլորս, ապա մեծամասնությունը կվերադառնա մշտական բնակության մեր լեռնոտ, հրաշք երկիր»:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՊՐԵՄԻԵՐԱ

# ՑՈՒՑԱԴՐՎԵՑ «ՎԵՐՋԻՆ ԾԱՂՐԱԾՈՒՆ» ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը մայիսի 21-ին Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում ներկայացրեց ժամանակակից դրամատուրգ Սամվել Խալաթյանի «Վերջին ծաղրածուն» բեմադրությունը: Բեմադրության հեղինակը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Ղազանչյանն է, որն ավելի վաղ մեզ հետ զրույցում նշել էր՝ Սամվել Խալաթյանի «Վերջին ծաղրածուն» պիեսը գրվել է քսան տարի առաջ:**



Ղազանչյանը վաղուց է ցանկացել բեմադրել այն, ժամանակ առ ժամանակ անդրադարձել է այդ ստեղծագործությանը, սակայն ամեն անգամ ինչ-որ հանգամանք խանգարել է: «Սամվել Խալաթյանը գրել է, որ պիեսի գործողությունները կատարվում են բոլոր ժամանակներում: Իրոք այդպես է: Այս ստեղծագործությունը կարող է բոլոր ժամանակներում արդիական լինել, որովհետեւ բոլոր ժամանակներում կա իշխանության եւ նրանց զուգահեռ քայլող ծաղրածուների խնդիրը: Ծաղրածու ասելով՝ մտածում ենք կոմիկի մասին, սակայն այստեղ ծաղրածուն լուրջ կերպար է»,-ընդգծել էր Ղազանչյանը: Հակոբ Ղազանչյանը երբեք կոնկրետ ժամանակաշրջանի կամ կոնկրետ մարդկանց մասին չի բեմադրում, անում է այն, ինչն արդիական ու հավերժական է համարում: «Ինձ համար բեմադրական միջոցները՝ լինի էկրան, պար եւ այլն, ինքնանպատակ չեն: Եթե ստացվում է, եթե կա անհրաժեշտություն, ու դրանով ավելի կհարստանա ներկայացումը կամ տվյալ տեսարանը, դիմում եմ տարբեր լուծումների»,-շեշտել էր ռեժիսորը:

Ներկայացման երաժշտությունը գրել է Վահե Հայրապետյանը: Մեկ գործողությամբ տրագիկոմեդիայում զբաղված են ՀՀ վաստակավոր արտիստներ Արթուր Կարապետյանը, Սաթիկ Հախնազարյանը, դերասաններ Հայկ Մնացականյանը, Թեհմինա Աբրահամյանը, Հարութ Բադիրյանն ու Միքայել Մաշուրյանը:

ԼՈՒՐԵՐ

## ԱՌԱՋԱՐԿ՝ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»–ԻՑ

«Կոնվերս բանկ»-ը փոքր եւ միջին ձեռնարկատերերի համար հանդես է գալիս հատուկ առաջարկով եւ հայտարարում է խրախուսման արշավ՝ C-POS հավելվածից օգտվողներին առաջարկելով նոր հնարավորություններ, ավելի շահավետ դարձնելով անկանխիկ վճարումների ընդունման այդ գործիքի կիրառումը:

Մասնավորապես, տնտեսվարողները մինչեւ 15.07.2023թ. Android հեռախոսներում ներբեռնելով եւ բանկի հետ պայմանագրի կնքումից հետո ակտիվացնելով C-POS-ը՝

- մինչեւ հուլիսի 31-ը կկարողանան անկանխիկ վճարումներ ընդունել 0% միջնորդավճարով (ուշադրություն՝ գործում է սահմանափակում),
- ըստ ցանկության կստանան Visa Business քարտ՝ 0% տարեկան սպասարկման վճարով քարտի գործողության ողջ ընթացքում:

Մանրամասների համար զանգահարել 010-511-211 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

## ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵՔ ՊԱՂՊԱՂԱԿԸ

Պաղպաղակի ճապոնական Cellato ապրանքանիշը «Գինեսի» համաշխարհային ռեկորդ է սահմանել՝ վաճառելով իր «Բյակույա» կոչվող առաջատար ուտեստի յուրաքանչյուր բաժինը 873,400 իենով (մոտ 6,696 դոլար):

Հատուկ աղանդերը պատրաստվում է մի շարք հազվագյուտ բաղադրիչներից, այդ թվում՝ ուտելի ոսկու կտորներից, սպիտակ տրյուֆելից եւ բնական պանիրներից: Տրյուֆելն աճեցվում է Ալբայում եւ արժե 15,192 դոլար/կգ, այլ հատուկ բաղադրիչները ներառում են Margiano Reggiano պանիրը եւ ճապոնական սակե ըմպելիքի կողմնակի բաղադրիչը: 1,5 տարվա ընթացքում Օսակայի RiVi fusion ռեստորանի խոհարարը, որը վերահսկում էր նախագծի զարգացումը, խառնում էր եվրոպական եւ ճապոնական բաղադրիչները այս նուրբ համը ստեղծելու համար: Ապագայում Cellato-ն հույս ունի ավելի շատ ապրանքներ թողարկել այլ համակցություններով՝ օգտագործելով այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են շամպայնը եւ խավիարը:

Այցելեք «Գինեսի» ռեկորդների գրքում Cellato-ի պրոֆիլը, որտեղ կգտեք ստորեւ բերված օրինակների տեսանյութը:

## ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ

Ռուսաստանցի Էլինա Ավանեսյանը դուրս եկավ թենիսի Ֆրանսիայի բաց առաջնության որակավորման փուլի կիսաեզրափակիչ:

Աշխարհի 134-րդ ռակետը քառորդ եզրափակչում մրցեց 200-րդ ռակետ ռուսաստանցի Դարյա Աստախովայի հետ եւ առավելության հասավ 6:1, 6:3 հաշվով: Մրցախաղը տեւեց 1 ժամ եւ 13 րոպե: Կիսաեզրափակչում 20-ամյա Էլինա Ավանեսյանը կմրցի իսպանացի Լեյրե Ռոմերո-Գարմազի եւ հոլանդացի Լեսլի Կերկխովեի դիմակայության հաղթողի հետ:

● *Մայիսի 24-ին «Թատրոն Կայարան»-ում տեղի կունենա «Թռի-վռի մի ճպուռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 17:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. ՀՀ քաղաքացին օտարերկրյա դիվանագիտական ծառայություն իրականացնելուց հետո վերադառնում է ՀՀ: Հնարավո՞ր է ներմուծել անձնական օգտագործման գույքը առանց մաքսատուրքի:**

*Հարություն Գալստյան (53 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետները եւ ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առեւտրական եւ այլ կցորդները ծառայության ավարտից հետո, առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման, կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը՝ բացառությամբ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների: Սույն մասով սահմանված գույքի բնաիրային չափերը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ 2000 թվականի հուլիսի 6-ի Մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6.1-ին մասը շարունակում է գործել օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների եւ ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առեւտրական եւ այլ կցորդներին վերաբերող մասով մինչեւ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 եւ 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների եւ շարժիչով այլ տրանսպորտային միջոցների համար Միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերի՝ պայմանագրի համաձայն՝ ՀՀ կողմից կիրառությունը սկսվելու ժամկետը:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ սահմանով տեղափոխվող, ՀՀ-ում հաշվառված թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցները ազատվում են մաքսավճարից:

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Եթե անձն ունի վատ վարկային պատմություն, ապա ինչքա՞ն ժամանակ է հարկավոր, որպեսզի մաքրվի այն:**

*Ալվինա Հովհաննիսյան (42 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնենք, որ վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» Ձեր (վարկառուի) վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է Ձեր կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ: Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր: Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկ?ույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է: («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

*Ֆինանսական համակարգի հաշտարար*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*



Երեւանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում տոնեցին Շառլ Ազնավուրի 99-ամյակը: Միջոցառման բացման արարողությունը վստահված էր քոլեջի սաներին: Միջոցառման ժամանակ հնչեցին Շառլ Ազնավուրի լեգենդար երգերը քոլեջի ուսանողների կողմից:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| Մարզ | Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ) |
|---|---|
| Շիրակ | +5 +10 / +13 +19 |
| Կոտայքի լեռներ | +5 +9 / +13 +15 |
| Կոտայքի նախալեռներ | +12 +14 / +16 +19 |
| Գեղարքունիք | +5 +10 / +12 +16 |
| Լոռի | +7 +12 / +15 +18 |
| Տավուշ | +9 +14 / +16 +19 |
| Արագածոտնի լեռներ | +5 +8 / +13 +15 |
| Արագածոտնի նախալեռներ | +13 +15 / +16 +20 |
| Արարատ | +15 +17 / +20 +23 |
| Արմավիր | +12 +15 / +16 +20 |
| Վայոց ձորի լեռներ | +5 +8 / +13 +15 |
| Վայոց ձորի նախալեռներ | +5 +8 / +13 +15 |
| Սյունիքի հովիտներ | +14 +17 / +17 +20 |
| Սյունիքի նախալեռներ | +7 +10 / +15 +18 |
| Արցախ | +12 +15 / +20 +25 |
| Երեւան | +13 +15 / +18 +20 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*